

շրջագայ ազգաց հետ բաղդատմամբ աւելի խնայող եղած է իւր համեստութեան: Բռնաբարութիւն եւ յափշտակութիւն հօտարէն ի բաց առեալ՝ բարոյականի գեղծմունքը աւելի բացառութիւն եղած են հայուն քով:

Ուստի Դուին սկսաւ բարձրանալ իր աւերակաց վրայ, իշխանք եւ մեծատունք շինեցին եւ նորոգեցին իրենց ապարանքը կաթողիկոսին օրինակին հետեւելով. թեպէտ այն կնոջ կտաւն էր ամէն շինութիւն Յայաստանի մէջ, որ ցորեկը շինէր՝ գիշերը կը քակէր. հայը այս տարի կը շինէր՝ օտարը գալ տարի կը քանդէր:

Իսկ Թեոդորոսի նոյն միջոցին զօրավարութեան հրաման կը հասներ եւ Կոստանդնուպոլսոյ, բայց ի՞նչ էր հրաման մը որ զօրութիւն չունէր, երբ թագաւորեալ քաղքին մէջ անգամ անիշխանութիւն կը տիրէր: Թեպէտ Ռշտունեաց Տէրը անվհատելի մարդ՝ կ'աշխատէր, կը յանձանձէր երկիրը ինամոք եւ ժողովուրդը զինք իրեն միմիայն ապաւեն կը ճանչէր: Բոլոր այդ ձմեռն անցուց Այրարատայ գաւառը, ամէն տեղ բերդերն ամրացնել կ'ուտար, բնակիչք կը յորդորէր քաջութեան եւ անձանց պահպանութեան եւ այնպէս դարնան կը դառնար Ռշտունեաց գաւառը միսիթարութիւն գտնելու իւր ընտանեաց մէջ: Եւ իր դարձը ոչ միայն ուրախութիւն էր իւր տան՝ այլ բոլոր Վասպուրականի. քանի-քանի՝ անգամ Աղթամարայ կղզին ապաստան եղած էր զանազան զավառաց, մինչ ինք Թեոդորոս պարթեւական պատերազմ կը վարէր թշնամուոյն դէմ, որ չէին գիտէր թէ ո՞ր ժամանակ աւելի վտանգաւոր էր, երբ առջեւին ներկա կը տեսնէին զի՞նք կամ երբ անհետ փախստական էր իրենցմէ:

Հիմա որ հազիւ կը հանգչէր եւ սիրտն ուրախութեան մէջ էր իմանալով թէ Բագրատունեաց Ասպետին հրաման եղած էր դառնալ հաքսորանաց ի Կոստանդնուպոլիս, յանկարծ զուժկան հասաւ թէ աբարացիք յարձակեցան Այրարատ, եւ Նախշեւան ու Երեւան կը պաշարէին: Առանց վայրկեան մը կորսնցնելու՝ պատրաստ գտնուած վեց հարիւր սպառազէն հեծելոց խումբը առաւ եւ հետեւակազօրը Ատոմ Շահունուոյ յանձնեց շուտով հասնիլ Ետեւեն: Ոչ գիշեր կար այս արշաւանաց մէջ եւ ոչ ցերեկ, հազիւ թէ ծիւց կարելոր հանգիստ կը թողուր, ուստի լուր առաւ թէ թշնամին չի կարենալով ոչ Նախշեւանու եւ ոչ Երեւանու եւ ոչ բերդերու վնասել, եկէր պաշարէր էր Արծափու բերդը, ուր Մասեաց Ոսն գաւառին բնակչաց բազմութիւնն ամրացեր էին ընտանեօք եւ ինչիւք:

Արծափու բերդը իւր համանուն գետին առաջ շինած՝ լաւ ամրացեալ էր. արաբացիք տեսան, որ անելանելի ժայռերուն վրայէն քառասունի չափ զօրականք պաշարելոց օգնութեան հասան եւ մտան Դարոնից բերնէն: Նոյն